ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒԻՐԵՐ

ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳԻՍՏԸ ՀԱՆՔԱՎԱՆՈՒՄ

Արմավիրի թեմի սոցիալապես անապահով ընտանիքների 9-13 տարեկան երեխաների ամառային հանգստի ծրագիրը այս տարի մեկնարկեց ս/թ հունիսի 1-ից: Թեմի առաջնորդ Տեր Սիոն եպիսկոպոս Աղամյանի օրհնությամբ, ծրագրի գլխավոր բարերար «Բաց Հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ հայկական մասնաճյուղի», ինչպես նաեւ աջակցությամբ ԱՄՆ Արեւելյան եւ Արեւմ**տ**յան թեմերի, բարերարներ Վահան Ավագյանի եւ Կարեն Հովհաննիսյանի, Հանքավանի «Լուսաբաց» ճամբարում իրականացվեց երկու հերթափոխով 113 երեխաների ամ**ա**ռային հանգիստ:

Հիմնականում գյուղերում չկան հոգեւոր-մշակութային, կրթա-դաստիարակչական, մարզական եւ այլ հաստատություններ, գյուղական ընտանիքներում ծնողներն էլ գերազանցապես զբաղված են լինում գյուղատնտեսական աշխատանքներով, իրենց ընտանիքների օրվա հացի վաստակման խնդրի լուծման արդյունքում անուշադրության են մատնվում երեխաները, ուստի առավել կարեւոր է գյուղի երեխաներին ուշադրության կենտրոնում պահել, նրանց համար բազմաթիվ ու տարաբնույթ կրթական, մշակութային միջոցառումներ կազմակերպել:

Այս տարվա «Արմավիրի մարզի անապահով ընտանիքների երեխաների 2011 թվականի ամառային հանգստի կազմակերպման մասին» ծրագրի շրջանակներում թեմի առաջնորդի նախագահությամբ կազմված հանձնաժողովը հանդիպումներ ունեցավ թեմի՝ Աղավնատուն, Շահումյան, Մարգարա, Երասխահուն, Արգավանդ, Փշատավան, Քարակերտ համայնքների համայնքապետարաններում անապահով եւ զոհված ազատամարտիկների, ինչպես նաեւ Էջմիածնի եւ Մեծամորի Զանգակատուն ԲՀԿ-ի անապահով ընտանիքների երեխաների ծնողների հետ: Վերջիններս իրենց գոհունակությունը եւ շնորհակալությունը հայտնեցին նման նախաձեռնությանը աջակցող բոլոր կազմակերպություններին, որ իրենց երեխաները առիթ կունենան զբսնվելու ճամբարում:

Հիմնական խնդիրն ու նպատակն է, հանգստի շրջանակներում ապահովել կարիքավոր երեխաներին լիարժեք սնունդով, նպաստել նրանց բարոյահոգեբանական վիճակի բարելավմանը, իրականացնել բազմաթիվ ընկերային, կրթադաստիարակչական, հոգեւոր-մշակութային, մարզամշակութային միջոցառումներ:

Արմավիրի թեմում տարիների ընթացքում կազմակերպված ճամբարների փորձը ցույց է տալիս, որ այդ կարճ ժամանակահատվածում երեխաները ստանում են բավարար դաստիարակություն, շփվում են իրենց հասակակիցների հետ՝ տարբեր շրջաններից, սովորում են ճիշտ սնվել, վարել առողջ ապրելակերպ, այցելում են պատմամշակութային վայրեր, սովորում են սիրել ու պահպանել շրջակա միջավայրը: Թեմի հոգեւոր սպասավորները ճամբարում երեխաներին ծանոթացնում են Հայ Եկեղեցու պատմությանը, սովորեցնում աղոթքներ, հոգեւոր երգեր, տալիս քրիստոնեական դաստիարակություն:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարւոյս Յունիս 16-ին տեղի ունեցաւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ժընեւի եւ Լեմանի շրջանի համայնքի ընդհանուր հիմնադիր ժողովը:

Ժողովը բացուեցաւ Զուիցերահայոց առաջնորդական տեղապահ՝ Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամեանի աղօթքով ու ներկաներու օրհնութեամբ:

Այնուհետեւ Տիար Արտէն Շէլլէֆեան ժողովին ներկայացուց համայնքին մէջ տիրող անհանգիստ կացութիւնը արդիւնք՝ ,Զուիցերիոյ Հայոց Եկեղեցական Խորհուրդն կոչեցեալ եւ ներկայիս արդեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից չճանչցուած ընկերութեան, ինչպէս նաեւ իրենց սեղմ շրջանակի եւ նախկին հոգեւոր հովիւ Աբէլ քհն. Մանուկեանի (այժմ Հրաչ Մանուկեան) հակականօնական գործունէութեանց: Ժողովականները կարեւորեցին ժնեւահայ համայնքի մէջ խաղաղութեան, կայունութեան եւ սիրոյ վերաստեղծումը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան բարձր հեղինակութեան վերահաստատումը:

Ընդառաջելով եկեղեցական համայնքի կառոյցի կազմակերպութեան համար ուղարկուած դիմումնագրերուն, հիմնադիր ժողովը քուէարկութեամբ ընտրեց եկեղեցական համայնքային խորհուրդ մը հետեւեալ կազմով.

Արտէն Շէլլէֆեան-ատենապետ
Աղաւնի Սրմաքէշ Պաղճեան - փոխատենապետուհի

Անի Ղազարեան - ատենադպրուհի
Ֆլաւիան Այկէնզաց - գանձապահ
Արեւ Սալամոլար-Եղլտրզ - խորհրդական
Անահիտ Օհաննէսեան - խորհրդական
Տիգրան Եազմաճեան - խորհրդական
Վահիկ Բաղրամեան - խորհրդական

Ընտրեալ Խորհուրդը ստանձնեց հետեւեալ պարտականութիւնները.

- Դիմել Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հիմնարկին, որպէսզի նորակազմ Եկեղեցական Խորհուրդին յանձնուի Սուրբ Յակոբ եկեղեցին առ ի գործածութիւն եւ սոյն հիմնարկի կանոնագրի դրոյթներու համաձայն:
- Ձեռնամուխ ըլլալ համայնքի անդորր կեանքի վերահաստատման:
- Ապահովել ծիսական կեանքի բնականոն ընթացքը:
- Պատրաստել Ծիսական Ընդհանուր Անդամական Ժողովը, որ պիտի գումարուի յառաջիկայ ամիսներուն եւ որուն օրակարգը նախօրօք պիտի ուղարկուի բոլոր Ժընեւի եւ Լեմանի շրջանի հայորդիներուն առանց խտրութեան:

Վերոյիշեալ եկեղեցական համայնքը միեւնոյն ժամանակ կը պատրաստուի Զուիցերիոյ այլ՝ Նոյշաթել-Ժիւրայի եւ Զյուրիխի համայնքներու հետ միասին, ձեռնարկել Երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ 1992թ. հռչակուած Զուիցերիոյ Հայոց թեմական կառոյցի վերակազմակերպման՝ առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Մէսրոպ վարդապետ Պարսամեանի հովանաւորութեան տակ:

Ժողովականները խորապէս հաւատացած են, որ թեմական կառոյցի կազմակերպմամբ ի վերջոյ կհաստատուի զուիցերահայոց բաղձալի միասնականութիւնը, կզորանայ Առաքելական մեր Մայր Եկեղեցւոյ հայապահպան առաքելութիւնը եւ կը զարգանայ էկիմենիկ համագործակցութիւնը Քոյր եկեղեցիներուն հետ:

Ժողովը փակուեցաւ Տեղապահ Հայր Սուրբի պահպանիչ աղօթքով :

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հետ համատեղ

Ծաղկաձորում, հունիսի 27-ից հուլիսի 1-ն անցկացրեց կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցեցին Հայ Առաքելական Եկեղեցու հայաստանյան թեմերի ավելի քան 70 կիրակնօրյաների շուրջ 150 ուսուցիչներ:

Դասընթացի առաջին օրը ներկաներին ողջունեց եւ իր հայրական օրհնությունը բերեց Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանը: Մասնակիցներին ողջունեց նաեւ «Վորլդ Վիժն» կազմակերպության՝ Եկեղեցու եւ պետության հետ կապերի բաժնի պատասխանատու տիկին Կարինե Հարությունյանը: Այնուհետեւ թեմերի ներկայացուցիչները մասնակիցներին ծանոթացրին թեմերի կիրակնօրյա դպրոցների ընդհանուր գործունեությանը եւ նախընթաց ուսումնական տարվա ձեռքբերումներին:

Ըստ ծրագրի՝ վերապատրաստումն ընթացավ երկու հիմնական ուղղությամբ: Սուրբ Գրքի ուսուցման շրջանակներում մասնակիցները դասախոսություններ լսեցին Սուրբ Գրոց մեկնաբանության հմտությունների, Ս. Գրքի եւ հնագիտության, ինչպես նաեւ քրիստոնյայի կյանքում ծեսի կարեւորության վերաբերյալ: Երկրորդ բաժինը վերաբերում էր դասավանդման մեթոդաբանությանը, դասի ճիշտ կառուցմանը, առաջնորդության, արդյունավետ հաղորդակցության եւ կառավարման սկզբունքներին: Մեթոդական բնույթի դասախոսություններին հաջորդեցին խմբային աշխատանքներ:

Դասընթացի յուրաքանչյուր օրը մեկնարկում էր հրավիրյալ հոգեւոր հայրերի կողմից Սուրբ Գրքի սերտողությամբ: Օրվա ավարտին Կեչառիս վանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում դասընթացի մասնակից հոգեւոր հայրերի կողմից կատարվում էր երեկոյան ժամերգություն եւ տրվում էր հոգեւոր պատգամ:

Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության եւ «Վորլդ Վիժն»-ի կողմից ուսուցիչներին հանձնվեցին հոգեւոր գրականություն եւ նվերներ: Հունիսի 30-ին ուսուցիչներին հյուրընկալվեց Վազգենյան հոգեւոր դպրանոցի քառաձայն երգչախումբը, որը հոգեւոր եւ աշխարհիկ երգերի հոգեպարար կատարումներով ոգեշնչեց ներկաներին:

Հուլիսի 1-ին տեղի ունեցավ հնգօրյա դասընթացի պաշտոնական փակումը: ՔԴԿ տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանն իր խոսքում երախտագիտություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին ամենօրյա հոգածության համար, ապա անդրադարձավ կիրակնօրյա վարժարանների կարեւորությանը հոգեւոր եւ ծիսական կյանքում: Դրական գնահատելով ամենամյա այս վերապատրաստումները՝ Հայր Սուրբը կարեւորեց կիրակնօրյա կրթօջախների անփոխարինելի դերը հայ մանուկների հոգում հավատի զորացման, եկեղեցասիրության եւ քրիստոնեական գիտակցության ձեւավորման գործում: ՔԴԿ տնօրենը ուրախությամբ տեղեկացրեց նաեւ, որ Հայաստանի տարբեր

թեմերում վերջին մեկ տարվա ընթացքում շուրջ 20 կիրակնօրյա նոր դպրոց է հիմնվել, ինչպես նաեւ ուսուցչական կազմը համալրվել է երիտասարդներով:

Փակման հանդիսությունն ավարտվեց Հայրապետական մաղթերգով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԵՎԽ «ՀԱՎԱՏՔ ԵՒ ԿԱՐԳ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հունիսի 27-ից հուլիսի 2-ը Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) տեղի է ունեցել Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Հավատք եւ կարգ» հանձնախմբի հերթական հանդիպումը՝ «Իշխանության աղբյուրները եկեղեցում» խորագրով: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս ժողովին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում է «Էջմիածին» ամսագրի փոխխմբագիր Տ. Շահե աբեղա Անանյանը:

Հանդիպման հիմնական նպատակը «Վաղ եկեղեցու հայրերի միջոցով Աստվածաշնչի մեկնության» ձեռնարկի ստեղծումն է, որը կոչված է հայրաբանական ավանդության կարճ ներածական դառնալու: Ձեռնարկը նախատեսվում է քրիստոնեական այն հարանվանությունների համար, որոնք ծանոթ չեն այդ ավանդությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ ԶՈՒ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՊՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՓՈԽՏԵՂԱԿԱԼԻՆ

Հունիսի 28-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանն ընդունեց ԱՄՆ ՊՆ պետքարտուղարի փոխտեղակալ Սելեստե Վոլլանդերին եւ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան զինվորական կցորդ, գնդապետ Քենդլ Պարկսին:

Ողջունելով հյուրերի այցը հայոց հոգեւոր կենտրոն՝ Սրբազան Հայրը իր օրհնությունը բերեց նրանց եւ ներկայացրեց ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գործունեությունը եւ առաջիկա ծրագրերը:

Մեծապես կարեւորելով հոգեւորականի ներկայությունը բանակում՝ ԱՄՆ ՊՆ պետքարտուղարի փոխտեղակալը պատրաստակամություն հայտնեց

կազմակերպել փոխադարձ այցելություններ՝ ԱՄՆ ՋՈՒ հոգևոր ծառայության եւ ՀՀ ՋՈՒ հոգևոր առաջնորդության միջև փորձի փախանակման եւ համագործակցության ձեւավորման նպատակով:

Պատվիրակությունը այցելեց նաեւ Մայր Աթոռի թանգարաններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ

News.am լրատվական գործակալության կայքում 2011թ. հրատարակված «Վերանորոգո՞ւմ, թե՞ վանդալիզմ...» հոդվածում, ինչպես նաեւ մի շարք այլ ԶԼՄ-ներով արտահայտված մտահոգությունները ստուգելու նպատակով հունիսի 30-ին Հաղարծին վանքային համալիր են այցելել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ճարտարապետական-շինարարական բաժնի աշխատակիցներից (ճարտարապետներ Գրիգոր Նալբանդյան եւ Մերի Դանիելյան) եւ եկեղեցականներից կազմված հանձնախումբը, ինչպես նաեւ «Շիրակ Ինժեներինգ Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի ներկայացուցիչները ու Հաղարծին վանքային համալիրի վերականգնման նախագծի հեղինակ Էդուարդ Գրիգորյանը: Հոդվածում նշված անձրեւաջրերի հեռացման ջրատար ստորգետնյա առվակը «զարդաքանդակ» քարերով փակված լինելու մասին տեղեկությունը ստուգելու նպատակով այն ամբողջովին բացվել եւ լուսանկարվել է: Տեղում որեւէ զարդաքանդակ քարերի առկայություն չի արձանագրվել: Նշենք, որ նորոգության ժամանակ հողածածկույթների տակից հայտնաբերվել են 700-ամյա վաղեմության զարդաքանդակների եւ կոտրված խաչքարերի բեկորներ, որոնք օգտագործվել են համալիրի վերանորոգման ընթացքում:

Ինչ վերաբերում է Հաղարծին վանքային համալիրում ժամանակակից լուսամփոփներ տեղադրելուն, ապա հարկ ենք համարում նշել, որ եկեղեցին անհրաժեշտ լուսավորությամբ ապահովելու նպատակով որմնաջահերը ընտրվել եւ տեղադրվել են վանական համալիրի վերանորոգման նախագծի հեղինակի կողմից: Այս առնչությամբ Մայր Աթոռի ճարտարապետական բաժինը որեւէ անպատեհություն չի տեսնում:

Ցանկալի պիտի լիներ, որ նման խնդիրներով մտահոգված անձինք նախ եւ առաջ ականջալուր լինեին մասնագետների կարծիքներին՝ տուրք չտալով անհիմն ու անտեղի հայտարարություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԵՀԵԿ-Ի ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հուլիսի 7-9-ը Ծաղկաձորում գումարված Հայ Եկեղեցու Համաշխարհային երիտասարդական կազմակերպության (ՀԵՀԵԿ) երկրորդ պատգամավորական ժողովի ավարտին՝ հուլիսի 10-ին ՀԵՀԵԿ պատվիրակները, որ ներկայացնում էին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի եւ Կ. Պոլսի պատրիարքությունների, Հայ Եկեղեցու 35 թեմերի եւ 6 հովվությունների երիտասարդական կազմակերպությունները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակցեցին ուխտի Ս. Պատարագին:

Պատարագիչն էր ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ, ՀԵՀԵԿ պատասխանատու Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Ս. Պատարագի ընթացքում մատուցված քարոզում Սրբազան Հայրը խանդավառությամբ անդրադարձավ ՀԵՀԵԿ երիտասարդաց ժողովին, որ աշխարհի տարբեր ծայրերից Մայր Աթոռում է համախմբել 150 երիտասարդների՝ մեծապես կարեւորելով երիտասարդների մասնակցությունը Եկեղեցու կյանքին:

Ս. Պատարագի ավարտին երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շիրիմի մոտ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանները, լուսահոգի Հայրապետի քույր Եսթեր Սարգսյանը, ՀԵՀԵԿ պատգամավորները եւ բազում ուխտավորներ:

Նույն օրը ՀԵՀԵԿ ժողովի մասնակիցների համար Մայր Աթոռում կազմակերպվեց ընդունելություն, որի ընթացքում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր օրհնությունը բերեց երիտասարդներին: Նորին Սրբությունը ուրախություն հայտնեց երիտասարդների Մայր Աթոռ այցի առիթով. «Ձեր այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին արտահայտում է ձեր նախանձախնդրության ոգին, ձեր սերը հանդեպ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, ազգային մեր արժեքները եւ Հայրենիքը: Նախանձախնդիր եք, որպեսզի կարողանաք մոտ լինել այն ակունքներին, որոնցից հագեցնելով ձեր պապակ սրտերը՝ պիտի զորացնեք ձեր հոգին, ձեր միտքը՝ լինելու համար արժանավոր հայորդիներ»:

Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ այցը ոչ միայն խանդավառություն կբերի երիտասարդների հոգիներին, այլեւ՝ հոգու նորոգություն՝ այլ կերպ ընկալելու իրենց կյանքը եւ գնահատելու առաքելությունը համայնքային եւ ազգային կյանքում: Նորին Սրբությունը հորդորեց նրանց ոգեւորությամբ, խանդավառությամբ ու նախանձախնդրությամբ իրենց մասնակցությունը եւ ներդրումը բերել իրենց համայնքների կյանքում, որպեսզի հայ կյանքը լինի

աշխույժ, հայ համայնքը լինի ավելի կենսունակ եւ գործունյա, իսկ հայորդիները աշխարհասփյուռ համայնքներում լինեն ավելի նախանձախնդիր իրենց ազգային արժեքների, ինքնության պահպանության գործի մեջ՝ այդպիսով իրենց ուխտը կատարելով Հայրենիքի, Ս. Էջմիածնի եւ մեր հայրերի սուրբ հիշատակի առջեւ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին իր գնահատանքը հայտնեց երիտասարդներին իրենց գիտակցության եւ ոգու համար, որ առաջնորդել է նրանց մերձենալ Եկեղեցուն, փարված մնալ ազգային սրբություններին, ազգային ավանդություններին ու արժեքներին:

Նորին Սրբությունը նաեւ իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Հովնան Սրբազանին՝ ՀԵՀԵԿ-ի կայացմանն ուղղված իր ջանքերի համար, ինչպես նաեւ բոլոր առաջնորդներին ու հովիվներին, ովքեր համախումբ են պահում հայ ազգի զավակներին ազգային հաստատությունների, եկեղեցիների շուրջ, նրանց ոգեւորում ու խանդավառում են ազգային ապրումներով եւ զգացումներով, ազգային ինքնության գիտակցությամբ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱՎԱԿՑԵԼ Է ՎԱՀԱԳՆ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանուն Գերագույն Հոգեւոր Խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության ցավակցություն է հայտնել երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանի մահվան առիթով:

Վեհափառ Հայրապետի ցավակցագրում մասնավորապես ասվում է. «Խորը ցավով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ մեր ժողովրդի արժանավոր եւ տաղանդաշատ զավակ, երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանի մահվան մասին:

...Վահագն Ստամբոլցյանի աստվածաշնորհ կյանքը եղավ ամբողջական նվիրում հայ մշակույթին եւ երաժշտական արվեստին: Նա տասնամյակներ շարունակ գնահատելի նպաստ է բերել ազգային եւ հոգեւոր-մշակութային վերազարթոնքին, ինչպես նաեւ երգեհոնային երաժշտության դարավոր արժեքները մատուցել երաժշտասեր հասարակությանը՝ իր ունկնդիրների հոգում զորացնելով սերը եւ նվիրումը հանդեպ հոգեւոր, սրբազան արժեքները:

Մեծ էր նաեւ լուսահոգի Վահագն Սրամբոլցյանի մանկավարժական վաստակը: Նա երկար տարիներ անսպառելի կորովով ու նվիրումով դասավանդում էր Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում իր իսկ ջանքերով հիմնված երգեհոնի դասարանում՝ ծառայելով երաժիշտների նոր սերնդի պատրաստության շնորհակալ գործին: Մխիթարությամբ ենք հիշում, որ բարձր գնահատելով բարեհիշատակ Վահագն Սրամբոլցյանի վաստակը հայ երաժշտության եւ արվեստի անդաստանում՝ Հայրապետական Կոնդակով նվիրյալ հայորդուն շնորհել ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղոթում ենք առ Ամենողորմ Տերը, որ Իր անսահման ողորմությամբ ու գթությամբ երկնային լուսե բարձունքներում հանգստություն պարգեւի հանգուցյալի հոգուն»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՀԵՀԵԿ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

«Լինել Աստծո հետ, Աստծով ապրել նշանակում է
լինել զորեղ եւ կարող հանձնառությունների,
բարի արարքների եւ հավատքի գործերի»:
ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հուլիսի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի եւ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի, մեկնեց Ծաղկաձոր, ուր հանդիպում ունեցավ հուլիսի 7-10-ը Ծաղկաձորում անցկացվող Հայ Եկեղեցու Համաշխարհային երիտասարդական կազմակերպության (ՀԵՀԵԿ) երկրորդ պատգամավորական ժողովի մասնակիցներին: ՀԵՀԵԿ այս երկրորդ պատգամավորական ժողովին մասնակցում էին 30 երկրներից ժամանած շուրջ 150 երիտասարդներ:

Հանդիպման սկզբում ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, որ նաեւ պատասխանատու է Հայ Եկեղեցու Համաշխարհային երիտասարդական կազմակերպության, Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց պատգամավորական ժողովի մասնակիցներին: Հովնան Սրբազանը երիտասարդների անունից երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին Եկեղեցու շուրջը համախմբված երիտասարդության

հանդեպ ցուցաբերվող հայրական հոգատար վերաբերմունքի համար, ապա Նորին Սրբությանը տեղեկացրեց եռօրյա ժողովի արդյունքների մասին:

Այնուհետև երիտասարդներին իր հայրապետական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուրախություն հայտնելով ժողովի մասնակիցների հետ հանդիպման առիթով: «Ինձ համար մեծ գոհունակություն է տեսնել աշխարհի տարբեր հայ գաղթօջախներից Հայրենիքում համախմբված երիտասարդ զավակներիդ հայասփանաբնակ մեր հայորդիների հետ միասին՝ զորացնելու ձեր սերը առ հայրենին, հանդեպ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը», - նշեց Վեհափառ Հայրապետը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուրախություն հայտնեց, որ ՀԵՀԵԿ-ն իբրեւ կառույց կայացել է, ձեւավորվել է համախմբումների գեղեցիկ ավանդույթը, ինչը վստահություն է ներշնչում, որ եկեղեցասեր երիտասարդական այս շարժումը պիտի նոր թափ առնի եւ նորանոր անդամներով համալրի իր շարքերը: Նորին Սրբությունը կարեւորեց երիտասարդների ներկայությունը Եկեղեցում՝ նշելով, որ նրանք, հաղորդ դառնալով եկեղեցական կյանքին ու առաքելությանը, պիտի դառնան առաքյալները նոր ժամանակների, մեր հավատքի տարածման, ազգային սրբությունների, ավանդույթների եւ արժեքների քարոզչության:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց երիտասարդներին իրենց այս տարիքում հիշել Աստծուն եւ ապրել Նրա պատվիրաններով, որպեսզի զերծ մնան սայթաքումներից, սխալ ընթացքներից, այլ, ունենալով Աստծո պատգամներն իրենց առաջնորդող, լցվեն բարությամբ, սիրով, նախանձախնդրությամբ հավատքի, մեր Սուրբ Եկեղեցու եւ ազգային նվիրական արժեքների նկատմամբ: «Եկեղեցու օրհնության ներքո գտնվող մարդիկ առանձնահատուկ շնորհի ներքո են: Նրանք Աստծո օրհնության, սիրո ու ողորմության ներքո են, եւ Աստծո Աջը միշտ նրանց հովանի է, զորակից եւ առաջնորդող: ...Մենք անշուշտ նախանձախնդիր ենք, որ մեր ժողովրդի զավակներն ամենքը՝ մանուկ, երիտասարդ, պատանի, տարեց, համախմբված լինեն մեր Եկեղեցու օրհնության ներքո, որովհետեւ լինել Աստծո հետ, Աստծով ապրել՝ նշանակում է լինել զորեղ եւ կարող հանձնառությունների, բարի արարքների եւ հավատքի գործերի», - ասաց Նորին Սրբությունը: Հայոց Հայրապետը մաղթեց երիտասարդներին իրենց կյանքն ապրել աստվածսիրության եւ ազգասիրության վեհ գաղափարներով, որպեսզի ոչ մի երիտասարդ չշեղվի ճշմարիտ ճանապարհից եւ միշտ արժանանա Երկնավոր Տիրոջ, հայրերի եւ գալիք սերունդների օրհնության: «Մեր կյանքն ապահով եւ անվտանգ է, եթե մեր կյանքը եւ լինելությունը խարսխված լինեն այս երկու նվիրական արժեքների վրա», - նշեց Նորին Սրբությունը՝ վերստին հորդորելով ներկաներին այդ ոգով եւ գիտակցությամբ իրենց նպաստը բերել Հայոց Եկեղեցու առաքելությանը, ազգային կյանքի շինությանն ու լուսավոր ապագայի կերտմանը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց Հովնան Սրբազանին՝ երիտասարդների նկատմամբ ցուցաբերվող առանձնահատուկ ուշադրության եւ կազմակերպության ազգանպաստ գործունեության համար, ինչպես նաեւ կենտրոնական գրասենյակի պաշտոնեությանը՝ ժողովի արդյունավետ կազմակերպման համար:

Հանդիպումից հետո Վեհափառ Հայրապետը զրույց ունեցավ աշխարհի տարբեր կողմերից հավաքված երիտասարդ պատվիրակների հետ, պատասխանեց նրանց հուզող հարցերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ «ԷՕՐՆԵԿՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ» ՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»-ի հետ համագործակցաբար հուլիսի 11-17-ը կազմակերպել էր յոթնօրյա ամառային հանգիստ «Էօրնեկեան հանրակրթական դպրոց» հանրակրթական ուսումնական հաստատության 8-15 տարեկան յոթանասուն աշակերտների համար, ովքեր կարիքավոր, բազմազավակ եւ ընկերային տարբեր ծրագրերում ընդգրկված ընտանիքներից են:

Առաջնորդությամբ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի եւ դպրոցի մանկավարժ-ջոկատավարների՝ Հանքավանի «Ջեփյուռ» ճամբարում երեխաները հետեւեցին մի շարք կրթական եւ հոգեւոր ծրագրերի:

Ճամբարականների համար կազմակերպվեցին նաեւ արշավներ, տարաբնույթ առարկայական ու սպորտային ուսուցական խաղեր եւ մրցույթներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՒ ՎԱՉԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ԱՄԱՎԵՐՋՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 9-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր

նախագահությամբ տեղի ունեցավ Գեորգյան հոգևոր ճեմարանի (Աստվածաբանական համալսարան) և Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի ամավերջյան հանդիսությունը:

Հանդիսությունը սկսվեց Տերունական աղոթքով, որին հաջորդեցին ՀՀ և Գեորգյան հոգևոր ճեմարանի օրհներգերը: Այնուհետև Գեորգյան հոգևոր Ճեմարանի 2010-2011թթ. ուսումնական տարվա ամփոփիչ հաշվետվությամբ հանդես եկավ ճեմարանի տեսուչ Տ. Գեորգ վարդապետ Սարոյանը: Տեսուչ Հայր Սուրբն իր խոսքում անդրադարձավ ճեմարանի ձեռքբերումներին՝ խորին երախտագիտություն հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ ցուցաբերած հայրական խնամքի և հոգատարության համար: Հաշվետվությամբ հանդես եկավ նաև Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի տեսուչ Տ. Ծնորհք արեղա Սարգսյանը:

Ամավերջյան հանդիսության ընթացքում ճեմարանականները հանդես եկան հոգևոր և ազգային երգերի կարտարումով և ասմունքով, որից հետո հանուն ուսանողության խոսք ասաց Գագիկ սարկավագ Հակոբյանը: Այնուհետև բարձր առաջադիմություն ցուցաբերած սաները Վեհափառ Հայրապետից ստացան խրախուսական նվերներ:

Հանդիսության ավարտին ներկաներին իր գնահատանքը և օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց ճեմարանների տեսչական կազմին, դասախոսներին և պաշտոնեությանը կատարված աշխատանքների համար: «Փառք և գոհություն ենք բարձրացնում առ Աստված, որ Գեորգյան և Վազգենյան հոգևոր հաստատությունների պատմությունը հարստացավ ևս մեկ ուսումնական տարվա գեղեցիկ ձեռքբերումներով. ձեռքբերումներ, որոնք արձանագրված արդյունք են նվիրյալ ջանքերի և աշխատանքի մեր տեսչության, դասախոսական կազմի ու նաև մեր սաների», - նշեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը, շնորհավորելով Գեորգյան հոգևոր ճեմարանի շրջանավարտ քսանվեց սաներին, վստահություն հայտնեց, որ նրանք իրենց ծառայությամբ պիտի փառք և ուրախություն հավելեն հայ ժողովրդին ու Հայոց Եկեղեցուն: Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես նշեց, որ ուսումնական տարվա ընթացքում արձանագրված արդյունքները լավատեսություն են ներշնչում դեպի հոգևոր հաստատությունների վաղվա օրը: Նորին Սրբությունը հորդորեց երիտասարդներին Ս. Էջմիածնի փառքի լույսի շողի կրողը լինել, որպեսզի նրանց հոգիներից ու կյանքից լույս տարածվի և լուսավորվի հայ ժողովրդի ներկա կյանքի և ապագայի ուղին: «Թող այդ լույսը ձեր մեջ այնպես շողարձակի, որ մարդիկ ձեր կյանքում ու ձեր գործերի մեջ տեսնեն ճառագայթումը այդ լույսի և փառավորեն մեր Եկեղեցին, նրա առաքելությունն ու դերակատարությունը մեր կյանքում», - մաղթեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայցելով Բարձրյալին զորացնել Հայ

Եկեղեցու կրթական հաստատությունները, որպեսզի շարունակաբար բարի արգասիքներ ապահովեն մեր Եկեղեցուն ու մեր ժողովրդին:

Հանդիսությունը փակվեց Նորին Սրբության «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ
«Կարիքավորի նկատմամբ հոգատարությունը աստվածապարգև պատգամ է հավատավոր իր զավակներին»

Հուլիսի 11-ին, Վաղարշապատում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Հրաչ եւ Սյուզան Թ-ուֆյան» հայորդյաց տանը, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց բարեգործական ճաշարանի բացման արարողությունը: Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ջեմմա Բաղդասարյանը, նախարարության աշխատակիցներ, ճաշարանից օգտվող տարեցներ:

Մայր Աթոռի հովանու ներքո գործող հերթական այս բարեգործական ճաշարանը՝ հովանավորությամբ հայորդյաց տան բարերարներ Հրաչ եւ Սյուզան Թ-ուֆյանների, ամեն օր սպասարկելու է երկու հարյուր սոցիալապես անապահով, կարիքավոր անձանց:

Նորաբաց բարեգործական ճաշարանի օրհնության արարողությունից հետո ընկերային ոլորտում Եկեղեցու կարեւոր այս ձեռնարկին անդրադարձան Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ վարդապետ Բաբայանը եւ փոխնախարար Ջեմմա Բաղդասարյանը: Ճաշարանից օգտվողների անունից շնորհակալական խոսք ասաց Անահիտ Գրիգորյանը:

Այնուհետեւ ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Իր խոսքում Նորին Սրբությունը նշեց, որ Վաղարշապատ քաղաքում տարիներ շարունակ գործող բարեգործական ճաշարանի գործունեությունը դադարեցվել էր անբարենպաստ պայմանների պատճառով: «Այսօր մեծ մխիթարություն է եւ գոհունակության առիթ, որ վերստին իր դռներն է բացում բարեգործական ճաշարանը կարիքավոր մեր զավակների առջեւ, ուր պիտի գան երկու հարյուր անձեր՝ ամենօրյա իրենց սնունդը ստանալու: Կարիքավորի նկատմամբ հոգատարությունը աստվածապարգև պատգամ է հավատավոր իր զավակներին, եւ մեր Եկեղեցին չորրորդ դարից ի վեր աջակից

է եղել, օգնության ձեռք է մեկնել, կողքին է եղել կարիքավոր անձանց», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Իր խոսքում Նորին Սրբությունը մասնավորաբար նշեց, որ բարեգործական ճաշարանների հաստատումը հայորդյաց տների մեջ նաև այլ, դաստիարակչական նպատակ է հետապնդում, որպեսզի Հայորդյաց տան մեջ կրթվող, դաստիարակվող սաները նույնպես կարողանան իրենց հոգատարությունը դրսևորել մեծերի նկատմամբ, սովորեն հարգանք ցուցաբերել մեծերին, իրենց հոգու սերը արտահայտեն նրանց նկատմամբ:

Այս առիթով Նորին Սրբությունը նաև իր գնահատանքը հայտնեց բարեգործական ճաշարանի բարերարներ Հրաչ եւ Սյուզան Թուֆայաններին, ովքեր սիրահոժար կերպով հանձն են առել հովանավորությունը բարեգործական հաստատության:

Օրհնության խոսքից հետո Վեհափառ Հայրապետը, փոխնախարար Ջ. Բաղդասարյանը եւ Մայր Աթոռի միաբանները բարեգործական ճաշարանից օգտվողների հետ միասին ճաշեցին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԲԸՄ «ԱՆԴՐԱՆԻԿ» ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հուլիսի 15-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության «Անդրանիկ» սկաուտական բանակումի 150 մասնակիցներին Հայաստանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից եւ Սիրիայից:

Հանդիպման սկզբում Նորին Սրբությանն ընդունելության համար երիտասարդների անունից շնորհակալություն հայտնեց ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության փոխտնօրեն Հովիկ Յորդեկյանը՝ կարեւոր նկատելով սկաուտների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Այնուհետեւ երիտասարդներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Մեզ համար հաճելի է տեսնել, որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունն այսպիսի գեղեցիկ մի նախաձեռնություն է իրականացնում, որ արդեն ավանդույթ է դարձել, եւ ամեն տարի մեր սիրելի հայորդիք որպես սկաուտներ գալիս են Հայաստան՝ նորոգելու իրենց ազգային ինքնությունը՝ հաղորդակցությամբ հայրենական սրբությունների եւ Հայրենիքի հետ: Մենք վստահ ենք, որ Հայաստանում կեցության այս օրերը ձեզ համար

պիտի լինեն ոգեշնչող եւ ոգեւորիչ, եւ դուք վերափոխություն պիտի ապրեք ձեր ինքնագիտակցության մեջ՝ առավել ճանաչելով ձեր Հայրենիքը, ձեր պատմությունը, պիտի դառնաք ավելի հպարտ՝ նախանձախնդիր ձեր ազգային ինքնության պահպանության նկատմամբ», - ասաց Նորին Սրբությունը:

Մեծապես կարեւորելով բնության գրկում նման բանակումների կազմակերպումը՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ դրանք պիտի նպաստեն ոչ միայն բնության նկատմամբ պատշաճ վերաբերմունքի դաստիարակմանը, այլեւ երիտասարդների հոգեւոր ապրումի զորացմանը՝ ընկալելու եւ տեսնելու Աստծո ներկայությունն արարչության մեջ: Աստծո ճանաչողությամբ, հավելեց Նորին Սրբությունը, երիտասարդների հոգիներից ներս պիտի առատանա սերն առ Հայրենին, առավել զորանա նաեւ ազգային ոգին եւ ազգային ինքնության գիտակցությունը:

Վերջում Նորին Սրբությունը զրուցեց սկաուտների հետ նրանց առօրյայից, ապա բարի եւ հաջող կեցություն մաղթեց երիտասարդներին Հայրենիքում:

Հանդիպմանը ներկա էր ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության տնօրեն Աշոտ Ղազարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՀԱՆՁՆԵՑ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հուլիսի 18-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Աստվածաշնչի ուսուցման դասընթացների ավարտական վկայականների բաշխման արարողություն:

Հայաստանի Աստվածաշնչային ընկերության կազմակերպած այս դասընթացներին մասնակցել է 110 անձ՝ Երեւանի համայնքային դպրոցների ուսուցիչներ, պետական ԲՈՒՀ-երի ուսանողներ եւ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակիցներ:

Տերունական աղոթքից հետո դասընթացների մասնակիցներին ողջունեց Հայաստանի Աստվածաշնչային ընկերության տնօրեն Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը՝ համառոտ ներկայացնելով դասընթացների ընդհանուր պատկերն ու նպատակը: Սրբազան Հայրն ընդգծեց, որ Ս. Գիրքը հարատեւ մեկնության եւ սերտողության կարիք ունի, եւ մեր հասարակությունն այսօր եւս կարիք ունի

ընթերցելու եւ ըմբռնելու Աստվածաշնչի հիմնական պատգամը՝ Աստծո խոսքն ուղղված մարդկանց: Այս նկատառումով է Աստվածաշնչային Ընկերությունը ձեռնամուխ եղել Ս. Գրքի ուսուցման, որպեսզի Աստվածաշնչյան պատգամը փոխանցվի հայ հասարակության լայն շրջանակներին՝ սկսած համալսարանի ուսանողներից մինչեւ ամենապարզ հավատացյալը:

Այնուհետեւ մասնակիցներից մանկավարժ Գայանե Կարապետյանը եւ ուսանողուհի Շահանե Հարությունյանն իրենց շնորհակալական խոսքն ուղղեցին Վեհափառ Հայրապետին, Եգնիկ Սրբազանին եւ իրենց դասախոսներին՝ Աստվածաշնչի սերտողության դասընթացներին մասնակցելու հնարավորության համար՝ մեծապես կարեւորելով օգտաշատ այս ձեռնարկը:

Դասընթացի ավարտական վկայականների բաշխումից հետո ամենքին իր հայրապետական օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ողջունելով Աստվածաշնչային ընկերության այս նախաձեռնությունը՝ Նորին Սրբությունը քաջալերեց, որպեսզի այն շարունակական բնույթ կրի՝ հնարավորություն ընձեռելով բազում հայորդիների՝ գիտելիքներ ձեռք բերել Ս. Գրքի ուսուցման եւ Աստվածաշնչի պատգամի ճիշտ ու շիտակ ընկալման առնչությամբ: Անդրադառնալով Աստվածաշնչի ուսուցման կարեւորությանը՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ Ս. Գիրքը որպես Աստծո պատգամ ընթերցող անհատի կյանքը գեղեցկանում է, փոխվում է նրա կենսակերպը, նա դառնում է ավելի բարի եւ սիրով առլեցուն, որովհետեւ Աստվածաշնչով նա Աստծո հետ է ընթանում, Աստծո պատվիրաններով ու պատգամներով առաջնորդվում:

«Մենք վստահ ենք, որ Աստվածաշնչի ճիշտ ըմբռնումը պիտի զորացնի մեր զավակների հավատը, նրանց հավատարմությունը մեր Եկեղեցու եւ մեր հայրերի սուրբ հավատքի հանդեպ, պիտի ամուր պատնեշ կանգնեցնի բոլոր օտար քարոզիչների առջեւ, զերծ պահի մեր զավակներին շեղումներից, մոլորություններից եւ սայթաքումներից, որովհետեւ մեր հավատքը, մեր հայրերի հետ սերտ կապն ու հաղորդակցությունը եւ մեր ազգային արժեքներն են կազմում մեր ինքնության ամբողջությունը», - ասաց Նորին Սրբությունը՝ վերստին ուրախություն հայտնելով, որ Աստվածաշնչի ուսուցման դասընթացները մուտք են գործում հայորդիների կյանքից ներս:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց դասընթացների նախաձեռնող Եգնիկ Սրբազանին եւ բոլոր այն անձանց, ովքեր մասնակցություն են բերել ծրագրին որպես դասախոս եւ մասնակից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԵՐՔՈՒՄ

«Ժամանակ» օրաթերթի հուլիսի 19-ի համարում հրապարակված «Վեհափառը հովանավորո՞ւմ է 65 հազար ԱՄՆ դոլարը հափշտակած ոստիկանին» հոդվածի մեջ Ամենայն Հայոց Կաթողիկոսին վերագրված տեղեկությունները սպահող են եւ կեղծ:

Վեհափառ Հայրապետը որեւէ առնչություն չունի ՀՀ ոստիկանության ԿՀԴՊԳՎ 4-րդ վարչության պետ Նազարեթ Մնացականյանի եւ նրա գործունեության հետ:

Բացի այդ՝ բացարձակ մտացածին հերյուրանք է այն, որ իբրեւ թե Նազարի «մորաքրոջ տղան՝ Ցախկալով Աբոն, ընդհանուր բիզնեսի մեջ է Վեհափառ Գարեգին Բ-ի հետ» եւ դրանից դրդված «Գարեգին Բ-ն հովանավոր է կանգնել Նազարի համար»: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նման հովանավորչություն երբեւէ չի իրականացնում եւ առավել եւս բիզնեսով չի զբաղվում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՐԵՒԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆ

Հուլիսի 29-ին, Երեւանում տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գրատան բացման արարողությունը՝ հանդիսապետությամբ Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի:

Մինչ արարողությունը ներկաներին ողջունեց գրատան տնօրեն Կարեն Հակոբյանը՝ ուրախություն հայտնելով կարեւոր այս ծրագիրը կյանքի կոչելու առիթով եւ վստահեցնելով, որ գրատունը հոգեւոր գրականության մատակարարմամբ մեծ ծառայություն կբերի հայ ժողովրդին:

Այնուհետեւ կատարվեց օրհնության արարողությունը, որի ավարտին Անուշավան Սրբազանը շնորհավորեց ամենքին գրատան բացման առիթով: Սրբազանն իր խոսքում մասնավորաբար նշեց. «Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Երեւանում բացվեց լուսավոր մի կենտրոն՝ գրքերի աշխարհ: Դժբախտաբար ժամանակի ընթացքում մեր հասարակության մեջ նվազել է ընթերցանությունը, գրատները վերածվել են այլ հաստատությունների: Նորին Սրբությունը, կարեւորելով ընթերցանությունն ու գիտելիքը, ցանկացավ, որ բացվի այս գրատունը, որպեսզի հայորդիները հնարավորություն ունենան ծանոթանալու

մեր ժողովրդի եւ Եկեղեցու պատմությանը, հոգեւոր գրականությանն ու Եկեղեցու դավանաբանությանը»: Սրբազանը նաեւ ընդգծեց հոգեւոր-կրոնական գրականության ընթերցանության անհրաժեշտությունը՝ նշելով, որ այս գրատունն իր ծառայությամբ եւս մեկ խարիսխ պիտի դառնա՝ եւ պահելու ժողովրդին ամեն տեսակ մոլորությունից:

Այս առիթով իրենց սրտի խոսքն ասացին նաեւ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Սարգսյանը եւ Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի գրասենյակի վարիչ Տ. Ղեւոնդ քահանա Մայիլյանը: «Գիրքը սրբություն է, որը կյանք է տալիս մարդուն, ազնվացնում ու կրթում է նրա հոգին, միտքն ու սիրտը: Հայ գիրքը հայ մարդու պատիվն է», - նշեց Տաթեւ Սրբազանը, իսկ Տ. Ղեւոնդ քահանան անդրադարձավ Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի լայնածավալ գործունեությանը՝ նշելով որ միայն վերջին հինգ տարիներին բաժինը հրատարակել է շուրջ երկու հարյուր միավոր պատմական, հայագիտական, եկեղեցագիտական, աստվածաբանական, մեկնողական, կրոնական-գեղարվեստական գրականություն:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, տարբեր հրատարակչությունների ներկայացուցիչներ, Հայաստանի գրողների միության անդամներ եւ գիտության ու մշակույթի գործիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Սույն թվականի հունիսի 2-ին ձեռնադրված հոգեւորականները, ավարտելով իրենց քառասնօրյա պահեցողության շրջանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ծառայության են կոչվել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու տարբեր թեմերում եւ Մայր Աթոռի կառույցներում:

Օգոստոսի 1-ից Տ. Մերուժան քահանա Սողոյանը հոգեւոր իր ծառայությունն է իրականացնելու Գուգարաց թեմում, Տ. Կոմիտաս քահանա Տիգրանյանը՝ Սյունյաց թեմում, Տ. Ստեփանոս քահանա Հովհաննիսյանը՝ Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում: Տ. Զաքարիա քահանա Անանյանը եւ Տ. Սիմեոն քահանա Մովսիսյանը կսպասավորեն ՀՀ Զինված Ուժերի հոգեւոր առաջնորդությունում, իսկ Տ. Թովմա աբեղա Խաչատրյանը եւ Տ. Համբարձում աբեղա Արաբյանը կշարունակեն իրենց ծառայությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ՏԻՐԱՆ ՔԱՀԱՆԱ ԱՎԱԳՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Տիրան քահանա Ավագյանը՝ ՀՀ Զինված Ուժերում հոգեւոր իր ծառայությունն ինքնակամ լքելու կանոնագանց ընթացքի համար:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Հայկ Ավագյան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ